ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 հուլիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

99
(3308)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ԱԳՆԱԺԱՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական կառավարման համակարգի անցնելուց հետո նախագահի ինստիտուտը վերածվեց հիմնականում ներկայացուցչական կառույցի: Սակայն նույնիսկ այդ սահմանափակ լիազորությունների պայմաններում հանրությունն իրավունք ունի ակնկալելու հաշվետվողականություն, թափանցիկություն եւ տեսանելի գործունեություն: Այսօր, սակայն, ՀՀ նախագահի աշխատակազմի գործունեության ուսումնասիրությունը բազմաթիվ հարցեր է առաջացնում:

Առաջին խնդիրը թափանցիկության պակասն է: «Ժողովուրդ» օրաթերթը բացահայտեց, որ ՀՀ նախագահի պաշտոնական կայքում հրապարակվող տեղեկատվությունը սահմանափակ է եւ հաճախ չի տալիս ամբողջական պատկերացում, թե ինչպես են ծախսվում պետական միջոցները: Գնումների վերաբերյալ վերջին հասանելի տեղեկությունները վերաբերում են դեռեւս տարվա սկզբին կատարված մի քանի գնումների. տվյալների հավաքման եւ դասակարգման ծառայության համար ծախսվել է 720 հազար դրամ, ապահովագրական ծառայությունների համար՝221 հազար դրամ: Դրանից հետո նոր տեղեկություններ գրեթե չեն հրապարակվել, ինչը դժվարացնում է հանրային վերահսկողությունը պետական միջոցների օգտագործման նկատմամբ:

Թափանցիկության խնդիրը հատկապես ակնհայտ է այն պայմաններում, երբ նախագահի աշխատակազմը ֆինանսավորվում է պետական բյուջեից: Հանրությունը պետք է կարողանա պարզել, թե ինչ ծրագրեր են իրականացվում, ինչ ծառայություններ են ձեռք բերվում եւ ինչ արդյունքներ են ապահովվում այդ ծախսերի դիմաց: Սակայն առկա տեղեկատվությունը թույլ չի տալիս նման գնահատական տալ:

Երկրորդ խնդիրը գործունեության բովանդակային աղքատությունն է: Նախագահի պաշտոնական կայքում հրապարակվող նորությունների զգալի մասը բաղկացած է շնորհավորական եւ ցավակցական ուղերձներից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը դեռեւս ամիսներ առաջ գրել էր, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի վերաբերյալ վարույթ է հարուցվել: Օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պաշտոնապես հաստատել էր տեղեկությունը. «Հանձնաժողովը, քաղաքացու դիմումի հիման վրա, 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ վարքագծի կանոնների առերեւույթ խախտման հիմքով հարուցել է վարույթ, որը գտնվում է ընթացքի փուլում»: Հանձնաժողովը նաեւ նշել էր, որ վարույթը վերաբերում է մասնավոր անձանց անձնական եւ ընտանեկան կյանքին առնչվող զգայուն տվյալների, ուստի այլ մանրամասներ հրապարակման ենթակա չեն: «Ժողովուրդ» օրաթերթը տիրապետում է վարույթի նյութերին, սակայն, հաշվի առնելով, որ թեման անձնական բնույթի է, զերծ ենք մնում հրապարակելուց: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ սեպտեմբերի 30-ի վարույթի քննությունը, որպես այդպիսին, չի էլ կայացել: Պատճառը ոչ թե այն էր, որ բողոքն անհիմն էր կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը գտել էր, թե ՄԻՊ-ը որեւէ խախտում թույլ չի տվել, այլ շատ ավելի պարզ ու թերեւս անհեթեթ պատճառով՝ հանձնաժողովում պարզապես քվորում չի եղել ու թեման փակել են:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Հունիսի 7-ին կայացած ԱԺ ընտրությունների արդյունքներով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացավ 64 մանդատ, ինչի շնորհիվ ՔՊ պատգամավոր Նարեկ Ղահրամանյանը եւս պահպանելու է իր պատգամավորական մանդատը եւ կլինի նոր ձեւավորվող Ազգային Ժողովի կազմում: «Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրել է, թե ինչպես են տարիների ընթացքում փոխվել պատգամավորի գույքը, եկամուտներն ու դրամական միջոցները՝սկսած 2020 թվականից մինչեւ 2025 թվականը: Հիշեցնենք, որ Նարեկ Ղահրամանյանը 2018 թվականի հուլիս-հոկտեմբերին եղել է Կապան խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնակատար: 2020-2021 թվականներին եղել է Ազգային Ժողովի պատգամավոր («Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով), «Իմ քայլը» խմբակցության անդամ: 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում ընտրվել է Ազգային Ժողովի պատգամավոր՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով: Հիշեցնենք նաեւ, որ 2023 թվականին ԱԺ պատգամավոր Նարեկ Ղահրամանյանը զրկվել էր վարորդական իրավունքի վկայականից՝հարբած վիճակում մեքենա վարելու պատճառով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Վերջին մեկ տարվա ընթացքում Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում մահացել է 36 մարդ: ArmLur.am-ը այդ հրապարակված տվյալներից պարզեց, 8-ը ինքնասպանության դեպքեր են, իսկ 28 կալանավոր մահացել է առողջական խնդիրների հետեւանքով՝այնպիսի հիվանդություններով, որոնք բազմաթիվ դեպքերում ակնհայտորեն անհամատեղելի են եղել կալանքի պայմաններում պահվելու հետ: Այս թվերը պարզապես վիճակագրություն չեն: Դրանք 36 մարդկային ճակատագրեր են եւ 36 հարցեր պետությանը, որոնց պատասխանները մինչ օրս չեն տրվել: Առավել մտահոգիչն այն է, որ այդ հիվանդությունների մասին տեղյակ են եղել թե՛ կալանքը կիրառած դատավորները, թե՛ քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմը: Ավելին, բանտում մահացածներից շատերը նույնիսկ դատապարտված չեն եղել. նրանք գտնվել են նախնական կալանքի տակ, երբ դեռ անմեղության կանխավարկածը գործում է, սակայն այդ իրավունքը նրանց չի փրկել մահից: Իհարկե, օրենքը կարծես ամեն ինչ նախատեսել է: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը երաշխավորում է կալանավորված անձի՝բժշկական օգնություն ստանալու իրավունքը: ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825 որոշման 101-րդ կետը նախատեսում է նաեւ սեփական ընտրությամբ քաղաքացիական բժշկական հաստատության մասնագետների ծառայություններից օգտվելու հնարավորություն:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ ՉԷ»

Տարածաշրջանային անվտանգությանն առնչվող եւ այլ հարցերի շուրջ ArmLur.am-ը զրուցել է կրոնագէտ, փիլիսոփա Վարդան Խաչատրյանի հետ:



- Ներքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ հաճախ շրջանցում ենք այն գործընթացները, որոնք տեղի են ունենում Հայաստանի հարեւան երկրներում, սակայն կարող են ուղղակի ազդեցություն ունենալ մեր երկրի վրա: Այս համատեքստում ցանկանում եմ անդրադառնալ Իրան-Իսրայել հակամարտությանը, որը շարունակվում է արդեն մի քանի ամիս՝ պարբերաբար սրվելով: Թեեւ որոշ փուլերում հայտարարվել էր ռազմական գործողությունների դադարեցման մասին, հետագայում կրկին արձանագրվեցին հարվածներ, մասնավորապես, իրանական նավերի նկատմամբ, եւ լարվածությունը նորից աճեց: Ավելին, Իրանը հայտարարում է, որ նախկին պայմանավորվածություններին վերադառնալու մտադրություն չունի: Ինչպե՞ս եք գնահատում ստեղծված իրավիճակը, եւ ի՞նչ զարգացումներ եք կանխատեսում առաջիկայում:

- Նախ պետք է հասկանալ, որ ցանկացած պատերազմ գնահատելիս անհրաժեշտ է դիտարկել ոչ թե միայն ռազմական գործողությունները, այլ դրանց հիմքում ընկած գերշահերը: Երբ մենք խոսում ենք խաղաղության մասին, պետք է նաեւ հարց տանք՝ ինչ շահերի շուրջ է սկսվել հակամարտությունը, եւ արդյո՞ք այդ շահերը լուծված են:

Իմ գնահատմամբ՝ այս հակամարտության առանցքում համաշխարհային գերակայության պահպանման խնդիրն է: Այստեղ առանձնահատուկ դեր ունի Իսրայելը, որը տարածաշրջանում հանդիսանում է Միացյալ Նահանգների գլխավոր ռազմավարական դաշնակիցը եւ ամերիկյան շահերի հիմնական կրողը:

Եթե պատմական համեմատություն կատարենք, ապա համաշխարհային երկու խոշոր կայսրություններ են ձեւավորել միջազգային համակարգը: Առաջինը Մեծ Բրիտանիան էր, որի հզորությունը հիմնված էր արդյունաբերական հեղափոխության եւ ածխի վրա: Սակայն երկու համաշխարհային պատերազմներից հետո այդ գերակայությունն ավարտվեց, եւ առաջնորդող դիրքը փոխանցվեց ԱՄՆ-ին:

1971 թվականից սկսած ԱՄՆ-ի տնտեսական ու քաղաքական գերակայությունը մեծապես հիմնված է նավթադոլարի համակարգի վրա: Այսինքն՝ համաշխարհային նավթի վաճառքը հիմնականում իրականացվում է ամերիկյան դոլարով, ինչը դոլարին տալիս է բացառիկ դիրք միջազգային ֆինանսական համակարգում:

Այսօր այդ համակարգը լուրջ մարտահրավերի առաջ է կանգնած: Իրանը, ինչպես նաեւ մի շարք այլ երկրներ, նավթի վաճառքի ժամանակ ավելի հաճախ օգտագործում են այլ արժույթներ, մասնավորապես՝ չինական յուանը: Դա աստիճանաբար թուլացնում է դոլարի միջազգային դիրքերը, եւ հենց այստեղ է, որ ձեւավորվում է հակամարտության կարեւոր տնտեսական բաղադրիչը:

Միացյալ Նահանգները ձգտում է պահպանել նավթադոլարի համակարգը, իսկ Իրանը փորձում է վարել ավելի անկախ տնտեսական քաղաքականություն: Այս շահերի բախումն էլ ռազմական լարվածության կարեւոր պատճառներից մեկն է:

Վերջին զարգացումները ցույց են տալիս նաեւ, որ պատերազմը փոխում է միջազգային հարաբերությունների բնույթը: Ակնհայտ է, որ համաշխարհային իրավունքի գործող մեխանիզմները հաճախ չեն գործում այնպես, ինչպես նախատեսված էր, իսկ միջազգային պայմանավորվածությունները միշտ չէ, որ պահպանվում են:

- Վերջին շրջանում ստեղծվել է տպավորություն, որ հակամարտությունն աստիճանաբար վերածվել է ԱՄՆ-Իրան դիմակայության, իսկ Իսրայելի դերը որոշ չափով երկրորդ պլան է անցել: Իրանը հիմնականում թիրախավորում է ամերիկյան բազաները, իսկ ԱՄՆ-ն շարունակում է հարվածներ հասցնել Իրանի ուղղությամբ: Ինչո՞վ եք բացատրում այս փոփոխությունը:

- Կարծում եմ՝ այստեղ պետք է տարբերել ԱՄՆ-ի եւ Իսրայելի շահերը: Թեեւ նրանք ռազմավարական գործընկերներ են, սակայն նրանց նպատակները լիովին նույնական չեն:

Իսրայելի համար առաջնային խնդիրն Իրանի ռազմական ներուժի հնարավորինս թուլացումն է, քանի որ Իրանը դիտարկվում է որպես անմիջական անվտանգային սպառնալիք:

Միաժամանակ պետք է նշել, որ Իրանի հրթիռային կարողությունները զգալիորեն զարգացել են: Եթե հրթիռային հարվածները լինեն լայնածավալ եւ շարունակական, դրանք կարող են լուրջ վնաս հասցնել Իսրայելի ենթակառուցվածքներին: Հենց այս հանգամանքն էլ սահմանափակում է Իսրայելի գործողությունների հնարավորությունները:

Մյուս կողմից, ԱՄՆ-ն տարածաշրջանում պաշտպանում է ավելի լայն ռազմավարական եւ տնտեսական շահեր, որոնք կապված են ոչ միայն Իսրայելի անվտանգության, այլեւ էներգետիկ ուղիների, միջազգային ֆինանսական համակարգի եւ սեփական ազդեցության պահպանման հետ:

-Որոշ վերլուծաբաններ այս հակամարտությանը տալիս են նաեւ կրոնական բնույթ: Կարո՞ղ ենք ասել, որ սա ոչ միայն աշխարհաքաղաքական, այլեւ կրոնական դիմակայություն է:

-Ես չէի բնութագրի այս հակամարտությունը որպես զուտ կրոնական: Կրոնական հռետորաբանությունն, իհարկե, առկա է, սակայն հիմնական շարժիչ ուժը քաղաքական, տնտեսական եւ աշխարհաքաղաքական շահերն են:

Վերջին շրջանում նույնիսկ տարբեր կրոնական կենտրոններից հնչող հայտարարությունները ցույց են տալիս, որ աշխարհում ձեւավորվող հակամարտությունները շատ ավելի շատ պայմանավորված են պետությունների ռազմավարական շահերով, քան քաղաքակրթությունների կամ կրոնների բախմամբ:

Ուստի, իմ գնահատմամբ, Իրան-Իսրայել հակամարտության հիմքում առաջին հերթին աշխարհաքաղաքական մրցակցությունն է, տնտեսական շահերը եւ ազդեցության համար պայքարը, իսկ կրոնական գործոնը հիմնական պատճառ չէ, այլ առավելապես ուղեկցող հանգամանք:

Շարունակությունը՝ հաջորդ համարում

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԿԿՀ-Ն ՄԵՐԺԵԼ Է

ArmLur.am-ը ուսումնասիրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կողմից 17.07.2026 ընդունված որոշումը, համաձայն որի՝ հանձնաժողովը մերժել է Քաղաքացի Սեմյոն Բաբայանի դիմումի հիման վրա վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ վարքագծի կանոնների խախտման փաստով վարույթ հարուցել:

Քաղաքացի Սեմյոն Բաբայանը ԿԿՀ էր ներկայացրել դիմում՝ պահանջելով վարույթ հարուցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դեմ՝ հունիսի 11-ին հնչեցրած հայտարարության կապակցությամբ: Ճեպազրույցի ընթացքում Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, թե «Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 100 տոկոսով օրգանիկ քվե, իսկ մյուս ուժերը ստացել են 100 տոկոսով ընտրակաշառքով քվե: Դիմումատուն նշել էր, որ վարչապետը խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված քաղաքական զսպվածության, վարքագծի կանոնների պահպանման, ինչպես նաեւ քաղաքացիների պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները:

Հանձնաժողովն իր ուսումնասիրությամբ արձանագրել է, որ վարչապետի խոսքերը կրել են որոշակի չափազանցություն, սակայն դրանք արտահայտվել են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ: Հիմնվելով Սահմանադրության, Եվրոպական կոնվենցիայի եւ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վրա՝ ԿԿՀ-ն շեշտել է, որ քաղաքական բանավեճերի եւ հանրային հնչեղություն ունեցող հարցերի համատեքստում արտահայտման ազատության սահմաններն առավել լայն են: Ըստ հանձնաժողովի հիմնավորման՝ քննադատական կամ զսպվածությունից որոշակի շեղում պարունակող հայտարարությունները կարող են վարքագծի խախտում համարվել միայն խիստ անձնական վիրավորանքի կամ գռեհիկ բնույթի դեպքում:

ԿԿՀ-ն եզրահանգել է, որ Նիկոլ Փաշինյանի արտահայտություններն ուղղված չեն եղել անձնական վիրավորանք հասցնելուն, այլ կրել են գնահատողական բնույթ՝ կապված նախընտրական շրջանում հնարավոր իրավախախտումների եւ ընդդիմադիր ուժերի գործունեության քննադատության հետ: Այսպիսով, հանձնաժողովը որոշել է մերժել Սեմյոն Բաբայանի դիմումի հիման վրա վարույթի հարուցումը:

Ա. Վ.

ԼԱՐՎԱԾ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ

Ինչպես արդեն հայտնի է, այս տարվա հոկտեմբերին Հայաստանի «Մերիդիան» էքսպո կենտրոնում նախատեսվում է անցկացնել Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17):

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրների փոխանցմամբ՝ Նիկոլ Փաշինյանը Շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանին հորդորել է համաժողովը կազմակերպել բարձր մակարդակով՝ ընդգծելով, որ թերությունները չեն հանդուրժվելու:

Մեր աղբյուրների տեղեկություններով՝ նոր կառավարության ձեւավորման ժամանակ Մաթեւոսյանը կվերանշանակվի նախարարի պաշտոնում՝ պայմանով, որ համաժողովի կազմակերպման ընթացքում ձախողումներ չեն արձանագրվի: Հակառակ դեպքում, ըստ աղբյուրների, նա եւ ոլորտը համակարգող փոխնախարարը կհրաժեշտ տան իրենց պաշտոններին:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ նախարարությունում ներկայումս լարված աշխատանքային մթնոլորտ է, եւ ամբողջ անձնակազմը ներգրավված է համաժողովի կազմակերպչական աշխատանքներում: Այս պահին նաեւ որոշվել է, որ մինչեւ հոկտեմբերին նախատեսված համաժողովի անցկացումը նախարարությունում կադրային փոփոխություններ չեն իրականացվելու:

Նշենք, որ հունիսին Նիկոլ Փաշինյանն այցելել էր «Մերիդիան» կենտրոն:

Շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանը վարչապետին է ներկայացրել կենտրոնում իրականացվող շինարարարական աշխատանքները, ստեղծվող պայմաններն ու տեխնիկական հնարավորությունները: Նիկոլ Փաշինյանին զեկուցվել են ենթակառուցվածքների եւ ծառայությունների մատչելիությունն ու համապատասխանությունն ապահովելու, ինչպես նաեւ համաժողովի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձեւավորման աշխատանքները

Ս. Գ.

ԸՆՏՐՎԵԼ ԵՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«Հայաստան» խմբակցության ղեկավար է ընտրվել Աննա Գրիգորյանը, իսկ խմբակցության քարտուղար՝ Արթուր Խաչատրյանը: Այս մասին նշվում է «Հայաստան» դաշինքի հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ «Հայաստան» դաշինքի առաջնորդ, Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խմբակցության անդամների հանդիպում, որի ընթացքում քննարկվել են առաջիկա անելիքները:

Նորընտիր Ազգային Ժողովի առաջին նստաշրջանը կգումարվի օգոստոսի 2-ին ժամը 10:00-ին: Նոր խորհրդարանում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ունի 64, «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝29, իսկ «Հայաստան» դաշինքը՝12 մանդատ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՏԵՎԵԼ Է ԿԵՍ ԺԱՄ

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովն ու ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն հուլիսի 23-ին Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում, ԱՍԵԱՆ-ի միջոցառման շրջանակում անցկացրել են ավելի քան կես ժամ տեւած հանդիպում:

ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի խոսքով՝ հանդիպման նախաձեռնողը եղել է ամերիկյան կողմը, իսկ ռուսական պատվիրակությունը համաձայնել է առաջարկին:

ՌԴ ԱԳՆ-ի հաղորդմամբ՝ Լավրովը Ռուբիոյին ներկայացրել է ռազմաճակատում տիրող իրավիճակի վերաբերյալ ռուսական կողմի գնահատականը եւ ընդգծել Ուկրաինային զենքի մատակարարումների շարունակման անթույլատրելիությունը: Նա նաեւ վերահաստատել է Ռուսաստանի պատրաստակամությունը՝ Ուկրաինայի հակամարտությունը կարգավորելու քաղաքական-դիվանագիտական ճանապարհով, ինչպես նաեւ հավատարմությունը Անքորիջում ձեռք բերված պայմանավորվածություններին եւ այն առաջարկներին, որոնք, ըստ Մոսկվայի, ներկայացվել էին ամերիկյան կողմի կողմից Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հանդիպման ընթացքում:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ Ռուսաստանի եւ ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատանքի պայմանների կարգավորման հարցերը, ինչպես նաեւ տարածաշրջանային եւ միջազգային օրակարգի թեմաներ, այդ թվում՝ Պարսից ծոցում ստեղծված իրավիճակը: ՌԴ ԱԳՆ-ի տեղեկացմամբ՝ Լավրովն ու Ռուբիոն պայմանավորվել են շարունակել արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ շփումները, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների շրջանակում:

Հանդիպումը սկսվել է տեղական ժամանակով ժամը 11:54-ին եւ ավարտվել 12:31-ին՝ տեւելով ավելի քան 30 րոպե: Լրագրողներին թույլատրվել է միայն հանդիպման մեկնարկին նկարահանել առաջին կադրերը, որից հետո նրանք լքել են բանակցությունների սրահը: ԱՄՆ լրագրողները փորձել են հարցեր ուղղել Մարկո Ռուբիոյին, սակայն վերջինս չի պատասխանել:

Ա. Վ.

ՄԵՂԱԴՐԵԼ Է

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը հայտարարել է, որ Իսրայելի կառավարության որոշ անդամներ փորձում են ազդել ամերիկյան հասարակական կարծիքի վրա՝ Իրանի հետ պատերազմը շարունակելու նպատակով:

Ջո Ռոգանի փոդքաստում Վենսը նշել է, որ վստահում է Իսրայելի որոշ պաշտոնյաների, սակայն կան նաեւ մարդիկ, որոնք, ըստ նրա, փորձում են խոչընդոտել ԱՄՆ-ի դիվանագիտական ջանքերին:

Վենսը հայտարարել է, որ օտարերկրյա կառավարությունները հաճախ փորձում են ազդել ԱՄՆ քաղաքականության վրա, սակայն մտահոգիչ է, երբ այդ ազդեցությունն ազդում է ամերիկյան ղեկավարության որոշումների վրա:

Նրա խոսքով՝ ԱՄՆ-ն շարունակում է փորձել կարգավորել Իրանի հետ հակամարտությունը՝ բանակցությունների եւ ռազմական ճնշման միջոցով:

ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՄՆ-ն եւ Սաուդյան Արաբիան ստորագրել են խաղաղասիրական միջուկային ծրագրի զարգացման վերաբերյալ համաձայնագիր, որը հնարավորություն կտա թագավորությանը զարգացնել խաղաղ նպատակներով միջուկային էներգետիկայի ոլորտը:

Համաձայնագիրը ստորագրել են ԱՄՆ էներգետիկայի նախարար Քրիս Ռայթը եւ Սաուդյան Արաբիայի էներգետիկայի նախարար Աբդուլազիզ բին Սալմանը: Այն ներառում է նաեւ միջուկային զենքի չտարածմանն ուղղված երկկողմ անվտանգության երաշխիքներ:

Թրամփի վարչակազմը դեռեւս չի հրապարակել համաձայնագրի ամբողջական մանրամասները, սակայն ամերիկյան լրատվամիջոցների փոխանցմամբ՝ փաստաթուղթը կարող է Սաուդյան Արաբիային հնարավորություն տալ ստեղծել ուրանի հարստացման ենթակառուցվածք:

ԱՄՆ էներգետիկայի նախարար Քրիս Ռայթը հայտարարել է, որ համաձայնագրերն արտացոլում են երկու երկրների հանձնառությունը՝ ամրապնդելու ԱՄՆ-Սաուդյան Արաբիա առեւտրային հարաբերությունները, ապահովելու տնտեսական բարեկեցություն եւ դաշնակիցների անվտանգությունը:

Նրա խոսքով՝ համաձայնագրերը համապատասխանում են միջուկային անվտանգության եւ զենքի չտարածման ամենաբարձր չափանիշներին եւ հիմնված են ամերիկյան առաջատար տեխնոլոգիաների վրա:

Ուրանի հարստացման տեխնոլոգիան կարող է օգտագործվել ինչպես ատոմակայանների համար վառելիք արտադրելու, այնպես էլ միջուկային զենք ստեղծելու նպատակով: Այդ պատճառով ԱՄՆ-ում թե՛ հանրապետական, թե՛ դեմոկրատ օրենսդիրների մի մասը մտահոգություն է հայտնել Սաուդյան Արաբիայի քաղաքացիական միջուկային ծրագրի վերաբերյալ:

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն, արձագանքելով քննադատությանը, հայտարարել է, որ Վաշինգտոնը չի կնքի որեւէ համաձայնագիր, որը կարող է հանգեցնել միջուկային զենքի տարածման վտանգի:

Համաձայնագիրը նախատեսված է 30 տարվա համար եւ հիմնված կլինի ամերիկյան տեխնոլոգիաների կիրառման վրա: Միաժամանակ, այն չի ներառում Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ) Լրացուցիչ արձանագրությունը, որը նախատեսում է ավելի լայնածավալ ստուգումներ եւ վերահսկողություն:

Փաստաթուղթն այժմ կներկայացվի ԱՄՆ Կոնգրեսի քննարկմանը: Թեեւ ակնկալվում է որոշակի ընդդիմություն, սակայն, քանի որ Հանրապետական կուսակցությունը վերահսկում է Կոնգրեսի երկու պալատները, մեծ է հավանականությունը, որ համաձայնագիրը կհաստատվի:

Համաձայնագրի ստորագրումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ԱՄՆ-ն եւ Իսրայելը ռազմական գործողություններ են իրականացրել Իրանի դեմ՝ հիմնավորելով դրանք նաեւ Թեհրանի միջուկային ծրագրի վերաբերյալ մտահոգություններով: Իրանը, իր հերթին, շարունակում է պնդել, որ իր ուրանի հարստացման ծրագիրը բացառապես խաղաղ նպատակներ է հետապնդում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԵԾԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ Ալ-Սիսիին ազգային տոնի՝ Հեղափոխության օրվա առիթով: Ուղերձում ասված է.

«Մեծարգո պարոն նախագահ,

Ջերմագին շնորհավորանքներս եմ հղում Ձեզ եւ Եգիպտոսի բարեկամ ժողովրդին՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետության ազգային տոնի՝ Հեղափոխության օրվա առիթով:

Հայաստանը մեծապես կարեւորում է Եգիպտոսի հետ բազմոլորտ հարաբերությունների հետագա ընդլայնումն ու զարգացումը՝ հիմնված մեր ժողովուրդների դարավոր բարեկամության եւ փոխադարձ հարգանքի վրա:

Գնահատելի է այն կառուցողական դերը, որն այսօր ունի Եգիպտոսը՝ Միջին Արեւելքի եւ Աֆրիկայի տարածաշրջաններում տեւական խաղաղության եւ կայունության հաստատման, ինչպես նաեւ հետագա բարգավաճման հնարավորությունների ստեղծման գործում:

Լիահույս եմ, որ առաջիկա տարիներին համատեղ աշխատանքի միջոցով մեզ կհաջողվի համապատասխանեցնել մեր պետությունների տնտեսական հարաբերություններն առկա քաղաքական երկխոսության բարձր մակարդակին:

Մաղթում եմ Ձեզ քաջառողջություն եւ նորանոր հաջողություններ, իսկ Եգիպտոսի բարեկամ ժողովրդին՝ հարատեւ խաղաղություն եւ բարօրություն»:

ԿՄԵԿՆԻ ԻՐԱՆ

ՀՀ փոխվարչապետի որոշմամբ՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը կգործուղվի Իրանի Իսլամական Հանրապետություն:

Փոխվարչապետի որոշմամբ՝ Դավիթ Խուդաթյանը 2026 թվականի հուլիսի 24-27-ը ներառյալ կգտնվի Թեհրանում:

Ըստ որոշման՝ գործուղման նպատակը Իրանի Իսլամական Հանրապետության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներ ունենալն է:

Նախարարի գործուղման ճանապարհածախսի եւ օրապահիկի ծախսերը կկատարվեն ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

Միաժամանակ որոշմամբ նշվում է, որ Դավիթ Խուդաթյանի՝ Իրանում գտնվելու ընթացքում գիշերավարձի ծախսերը կկատարվեն հրավիրող կողմի միջոցների հաշվին:

Փոխվարչապետի որոշմամբ՝ Դավիթ Խուդաթյանին պարտավորեցվել է գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած այցի արդյունքների մասին հաշվետվություն՝ սահմանված կարգի համաձայն:

ԱՐՁԱԿՈՒՐԴ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ

ՀՀ փոխվարչապետի որոշմամբ՝ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանին տրամադրվել է ամենամյա արձակուրդ:

Արփինե Սարգսյանին տրվել է 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մասը՝ 5 աշխատանքային օր տեւողությամբ: Արձակուրդը նախատեսված է 2026 թվականի հուլիսի 27-ից մինչեւ հուլիսի 31-ը ներառյալ:

Որոշման համաձայն՝ նախարարի արձակուրդում գտնվելու ընթացքում նրա պարտականությունները տարբեր օրերի կկատարեն ՆԳ նախարարի տեղակալները: Մասնավորապես, հուլիսի 27-29-ը ներառյալ Արփինե Սարգսյանին կփոխարինի ՆԳ նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը, հուլիսի 30-31-ը ներառյալ՝ ՆԳ նախարարի տեղակալ Արմեն Մկրտչյանը:

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ

ԹՈՒՅԼ ՉԵՆ ՏԱԼԻՍ ՏԵՍԱԿՅԵԼ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՏԵՐԸ

«Ի դատասխան զանգվածային լրատվության միջոցների հարցումների՝ տեղեկացնում ենք, որ Մարդու իրավունքների դատարանի սեփական նախաձեռնությամբ սկսված ուսումնասիրության շրջանակում, Մարդու իրավունքների դատարանի հանձնարարությամբ, ՄԻՊ ներկայացուցիչները հուլիսի 13-ին այց են իրականացրել ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ, առանձնազրույց ունեցել ՀՀ Ազգային Ժողովի 8-րդ գումարման դատգամավոր Արեգնազ Գուրգենի Մանուկյանի հետ:

Արձանագրվել են նրա կողմից ներկայացված հանգամանքները, ուսումնասիրվել պահման պայմաններն ու վերաբերելի փաստաթղթերը: Առանձնազրույցի ընթացքում Արեգնազ Մանուկյանը Պաշտպանի ներկայացուցիչներին, ի թիվս այլնի, հայտնել է, որ իր նկատմամբ դատարանի կողմից կիրառված հաղորդակցության սահմանափակման հետեւանքով չի կարողանում հաղորդակցվել դստեր հետ: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված՝ դատական վարույթին միջամտելու արգելքով պայմանավորված՝ Պաշտպանը չի քննարկում կոնկրետ քրեական վարույթով դատական ակտերի վերաբերյալ անհատական բողոքները: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ կալանքը եւ դրա հետ փոխկապված իրավունքների սահմանափակումները ենթադրում են անձի իրավունքներին առավել խիստ միջամտություն, Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար բարձրաձայնում է դրանց առնչվող հարցերը:

Նկատի ունենալով այն, որ Արեգնազ Մանուկյանի նկատմամբ կիրառված սահմանափակումը տարածվել է նաեւ վերջինիս անչափահաս դստեր վրա, իսկ դա ենթադրում է նաեւ երեխայի լավագույն շահի հաշվառում եւ անհրաժեշտ զգայունության պահպանում՝ այլ հարցերի թվում՝ Արեգնազ Մանուկյանի նկատմամբ կիրառված՝ դստեր հետ հաղորդակցության սահմանափակումները վերանայելու հնարավորությունը քննարկելու հարցը Մարդու իրավունքների պաշտպանը հասցեավորել է անձի կողմից խնդիրը բարձրաձայնելուց անմիջապես հետո: Հաշվի առնելով դեպքի զգայունությունը՝ Պաշտպանի հաստատությունը հաղորդակցություն է վարում նաեւ գործընկեր կազմակերպությունների հետ՝ նշված գործընթացում երեխայի լավագույն շահն ապահովելու, ինչպես նաեւ երեխայի կարիքներին համարժեք աջակցության ապահովման հնարավորությունը քննարկելու ուղղությամբ: Նշված տեղեկատվությունը խորհրդապահական է եւ ենթակա չէ հրապարակման:

Հրապարակման ենթակա այլ տեղեկությունների առկայության դեպքում ՄԻՊ հաստատությունը հանդես կգա լրացուցիչ»,-ասված է ՄԻՊ հայտարարության մեջ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

2 ԱՆՁ ԿԱ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նախնական վարկածով ինքնասպան եղած զինվոր Նարեկ Թորոսյանի դեպքով 2 զինծառայող են ձերբակալվել, եւ նրանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել:

ArmLur.am-ը երեկ մանրամասներ էր հայտնել մահացած զինծառայողի դեպքի վերաբերյալ:

Մասնավորապես, ըստ ArmLur.am-ին հասած տեղեկությունների՝ զինծառայողին հասցրել են ինքնասպանության: Նախնական տվյալներով՝ զինվորին ինքնասպանության հասցնելու դեպքից առաջ ծեծի են ենթարկել, որից հետո նա գնացել է ինքնասպանության:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ըստ նախնական վարկածի՝ մահացած զինծառայողը առաջին անգամ էր բարձրացել դիրքեր, ինչը ճակատագրական է դարձել նրա համար:

Հիշեցնենք՝ ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ ՊՆ N զորամասի զինծառայողի՝ հուլիսի 21-ին արձանագրված մահվան դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Կատարվում են անհրաժեշտ քննչական եւ վարութային գործողություններ:

Նշենք, որ մահացած զինծառայողը Չարենցավան քաղաքի բնակիչ Նարեկ Թորոսյանն է:

Ք. Մ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Նարեկ Կարապետյանի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով (փողերի լվացում): Հիշեցնենք, որ ԿԸՀ-ն Նարեկ Կարապետյանին զրկել է պատգամավորական անձեռնմխելիությունից, սակայն մերժել է Նարեկ Կարապետյանին կալանավորելու վերաբերյալ միջնորդությունը:

ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը հայտնում է. «Կարեւորելով հանրությանը պատշաճ եւ սպառիչ տեղեկատվություն տրամադրելու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հանձնառությունն անհրաժեշտ եմ համարում իրազեկել.

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այսօր հրավիրված նիստում չի մերժել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Նարեկ Կարապետյանին ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշել է վերադարձնել համապատասխան միջնորդությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առաջնորդվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ, որով Բարձր դատարանն արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «(...) գ) անազատության մեջ գտնվող պատգամավորի կարգավիճակ չունեցող անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող պահվել անազատության մեջ: Պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից անձը, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող զրկվել ազատությունից այլ կերպ, քան Ազգային ժողովի համաձայնությամբ (...)»:

Ըստ այդմ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը իր որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Նարեկ Կարապետյանին ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդության քննարկումն իր լիազորությունների շրջանակներից դուրս է»:

Նարեկ Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է բացակայելու արգելքը եւ 1 միլիարդ դրամ գրավ: Այս մասին հայտնում են Դատախազությունից:

ԴԱՏԱՐԱՆ ԵՆ ՀԱՆՁՆՎԵԼ

Դատախազը 2026 թվականի հուլիսի 22-ին, հաստատված մեղադրական եզրակացությամբ, Հակակոռուպցիոն դատարան է հանձնել «Միասնության թեւեր» կուսակցության օգտին քվեարկելու պայմանով ընտրակաշառք տալու եւ ընտրակաշառք ստանալու վերաբերյալ քրեական վարույթի նյութերը:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել է, որ Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Ա.Հ.-ն 2026 թվականի հունիսի 7-ին նշանակված Ազգային ժողովի հերթական ընտրությանը մասնակցելու եւ «Միասնության թեւեր» կուսակցության օգտին քվեարկելու պայմանով, Ալ.Հ.-ին խոստացել է ընդգրկել ՓԲ ընկերության կողմից Արծվանիկ բնակավայրի բնակիչների որոշակի խմբին ամսական տրամադրվող 40 հազար դրամ օգնության ցուցակում:

Դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Ա.Հ.-ի եւ Ալ.Հ.-ի նկատմամբ՝ ընտրակաշառք տալու եւ ընտրակաշառք ստանալու համար:

2026 թվականի հուլիսի 22-ին քրեական վարույթի նյութերը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են Հակակոռուպցիոն դատարան:

ԼՈՒՐԵՐ

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՆԳՆ Փրկարար ծառայության ստորաբաժանումները հանրապետության ողջ տարածքում իրականացնում են հանրային իրազեկման լայնածավալ աշխատանքներ՝ ուղղված հրդեհների կանխարգելմանը, դրանց տարածման ռիսկի նվազեցմանը եւ հնարավոր հետեւանքների մեղմմանը:

Հատկապես ակտիվ իրազեկման աշխատանքներ են իրականացվում հանգստի եւ զբոսաշրջության գոտիներում, որտեղ հրդեհների առաջացման հավանականությունն առավել բարձր է՝ պայմանավորված մարդկային գործոնով: Այդ տարածքներում բարձրախոսների եւ անօդաչու թռչող սարքերի միջոցով իրականացվում է իրազեկում, փակցվում են հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ պաստառներ, բաժանվում են տեղեկատվական թռուցիկներ, իսկ քաղաքացիների շրջանում իրականացվում են բացատրական աշխատանքներ: Հրդեհավտանգ այս օրերին հրդեհների կանխարգելմանն ուղղված միջոցառումների շրջանակում փրկարարական ծառայողներն ու էկոպարեկները համատեղ մշտադիտարկում են իրականացնում անտառածածկ եւ բուսածածկ տարածքներում: Կրկին հորդորում ենք լինել զգոն, խստորեն պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, իսկ հրդեհի կամ հրդեհի վտանգ ներկայացնող ցանկացած իրավիճակի դեպքում անմիջապես զանգահարել 112:

ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը 2026 թվականի հունիսի 19-ին միջնորդագիր էր ներկայացրել Շրջակա միջավայրի նախարարությանը եւ «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ 2008 թվականի հուլիսի 3-ին «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի եւ ՍՊ ընկերության միջեւ կնքված՝ պետական սեփականություն հանդիսացող 1215 քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

«Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ նշված տարածքն ամբողջությամբ ջրածածկ է, իսկ կառուցապատման իրավունքի պայմանագիրը ՊՈԱԿ-ում հաշվառված է որպես դադարած: Միաժամանակ, Կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվությամբ պարզվել է, որ պայմանագրի դադարման պետական գրանցում չէր իրականացվել:

Գլխավոր դատախազության միջնորդագրի հիման վրա՝ «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը դիմում է ներկայացրել Կադաստրի կոմիտե՝ կառուցապատման իրավունքից ծագող իրավունքի դադարեցման պետական գրանցումն իրականացնելու նպատակով:

Կադաստրի կոմիտեի կողմից 2026 թվականի հուլիսի 21-ին տրամադրված տեղեկանքի համաձայն՝ 1215 քմ մակերեսով հողամասի կառուցապատման պայմանագրից ծագող իրավունքը պետական գրանցմամբ դադարեցվել է:

● *Հանրապետությունում հուլիսի 17-ից 20-ը բացահայտվել է հոգեկան ներգործության եւ խարդախության 20-ական դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԸ 3 ԱՄՍՈՎ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

2023թ. հուլիսի 31-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Սուրեն Մանուկյանի, Արմեն Քամալյանի, Թաթուլ Պողոսյանի, Մուրադ Մուրադյանի դատավարությունը: Ս. Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Ա. Քամալյանի, Մ. Մուրադյանի, Թ. Պողոսյանի եւ մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ 2022թ հուլիսի 27-ին՝ ժամը 7-ի սահմաններում, Իջեւան համայնքի Աչաջուր գյուղում առեւանգել են Գրիշա Քոքոբելյանին եւ վերջինիս տեղափոխել Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայր, մինչեւ 2022թ. օգոստոսի 2-ը պահել են նշված վայրում վարձակալած տանը եւ նույն օրը ազատ արձակել: Ըստ մեղադրանքի՝ նշված ժամանակահատվածում՝ 2022թ. հուլիսի 29-ից Գրիշա Քոքոբելյանի որդուց՝ Խաչատուր Քոքոբելյանից, հորն ազատ արձակելու դիմաց, շորթմամբ պահանջել են առանձնապես խոշոր չափերի՝3 միլիոն ԱՄՆ դոլար, որից փաստացի ստացել են 40 հազար ԱՄՆ դոլար՝ կրիպտոարժույթի տեսքով: Ս. Մանուկյանին, Ա . Քամալյանին, Թ. Պողոսյանին, Մ. Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 191 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով («Մի խումբ անձանց կողմից մարդուն առեւանգելը») եւ 258 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով («Շորթումը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով»): Ս. Մանուկյանը եւ մյուս մեղադրյալները իրենց առաջադրված մեղադրանքը չեն ընդունում՝ համարելով այն շինծու, հնարովի:

Սուրեն Մանուկյանը Իջեւանի նախկին փոխքաղաքապետն է, Իջեւանի անտառտնտեսության նախկին տնօրեն, ԱԺ նախկին պատգամավոր, ՀՅԴ Գերագույն մարմնի նախկին անդամ: Նա քրեական գործով շուրջ երեքուկես տարի գտնվել է կալանքի տակ, այժմ գտնվում է տնային կալանքի տակ, սահմանափակված է նրա շփումն իր ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց հետ:

Դատավարության հուլիսի 22-ի նիստում դատավոր Սասուն Մխիթարյանը որոշել է 3 ամսով երկարաձգել Սուրեն Մանուկյանի տնային կալանքը: Նիստում որպես վկա հարցաքննվել է քրեական գործով քննչական խմբի ղեկավար Արթուր Այվազյանը: Նրա հարցաքննությունը կիսատ է մնացել, կշարունակվի հաջորդ նիստին: Վկայի կարգավիճակով հարցաքննվել է նաեւ Խաչատուր Քոքոբելյանի որդին՝ Սեւադա Քոքոբելյանը, ով դատարանում հայտարարել է, որ ինքն անտեղյակ է քրեական գործի հանգամանքներին: Հուլիսի 22-ի նիստում Սուրեն Մանուկյանը հարց է ուղղել գործով քննչական խմբի ղեկավար Արթուր Այվազյանին, թե ինչ ապացույցներ կան 40 հազար դոլար շորթման մասին, քննիչները որտեղից են վերցրել այդ թիվը: Սակայն դատավոր Ս. Մխիթարյանը հարցը հանել է, իբր այն կապ չունի քրեական գործի հետ:

Սույն գործով դատական հաջորդ նիստը նշանակվել է օգոստոսի 5-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՄ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԻՐԸ

ԱՐԳԵԼԵՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ֆրանսիայի խորհրդարանը հուլիսի 22-ին ընդունել է օրենք, որով մինչեւ 15 տարեկան երեխաներին կարգելվի օգտվել սոցիալական ցանցերից: Այսպիսով, Ֆրանսիան դարձել է Եվրամիության առաջին երկիրը, որը նման տարիքային սահմանափակում է սահմանում:

Օրենքն ստացել է պատգամավորների ճնշող մեծամասնության աջակցությունը եւ նախաձեռնության հիմնական պաշտպաններից է եղել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, որը մոտ օրերս կստորագրի այն:

«Սոցիալական ցանցերը մինչեւ 15 տարեկան երեխաների համար կարգելվեն արդեն այս ուսումնական տարվանից»,- X-ի իր էջում գրել է Մակրոնը՝ շնորհակալություն հայտնելով պատգամավորներին օրենքի ընդունման համար:

Նա ավելի վաղ հայտարարել էր, որ «երեխաների եւ դեռահասների ուղեղը վաճառքի ենթակա չէ», իսկ նրանց զգացմունքները չպետք է դառնան ո՛չ ամերիկյան հարթակների, ո՛չ էլ չինական ալգորիթմների մանիպուլյացիայի առարկա:

Նոր օրենքը նախատեսվում է կիրառել արդեն սեպտեմբերից՝ նոր ուսումնական տարվա մեկնարկից: Այնուամենայնիվ, դեռեւս պարզ չէ, թե ինչպես են սոցիալական ցանցերը ստուգելու օգտատերերի տարիքը: Ֆրանսիայի կառավարությունը խոստացել է ներդնել տարիքային ստուգման համապատասխան մեխանիզմներ:

Օրենքի կատարումը վերահսկելու է Ֆրանսիայի տեսալսողական եւ թվային հաղորդակցության կարգավորող մարմինը՝ Arcom-ը: Սահմանափակումը տարածվելու է բոլոր խոշոր սոցիալական հարթակների վրա:

Arcom-ի տվյալներով՝ Ֆրանսիայում 12-17 տարեկան դեռահասներն օրական միջինը 1 ժամ 21 րոպե են անցկացնում TikTok-ում: Կարգավորող մարմնի գնահատմամբ՝ հարթակի առաջարկությունների ալգորիթմը հաճախ տարածում է առավել ծայրահեղ բովանդակություն՝ դեռահասներին ենթարկելով անհանգստություն եւ հոգեբանական վնաս պատճառող տեսանյութերի շարունակական հոսքի:

Ֆրանսիան այս հարցում հետեւում է Ավստրալիայի օրինակին, որը 2025 թվականին աշխարհում առաջինն արգելեց մինչեւ 16 տարեկանների մուտքը սոցիալական ցանցեր: Նմանատիպ սահմանափակումներ նախատեսում են նաեւ Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Հունաստանը եւ Դանիան:

Միաժամանակ, իրավապաշտպաններն ու փորձագետները նշում են, որ միայն արգելքը բավարար չէ: Նրանք կոչ են անում սոցիալական ցանցերին հրաժարվել կախվածություն առաջացնող եւ մանիպուլյատիվ գործիքներից, իսկ երեխաներին՝ ավելի արդյունավետ թվային կրթություն ապահովել: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենն էլ վերջերս հայտարարել էր, որ «սոցիալական ցանցերը խաղալիք չեն» եւ կոչ արել սահմանել երեխաների տարիքին համապատասխան պաշտպանական մեխանիզմներ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐԱՁԱՆՑԵԼ Է 1000–Ը

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում (ԿԴՀ) եւ Ուգանդայում Էբոլա տենդից մահացածների թիվը հասել է 1001-ի: Այս մասին նշվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կայքում:

ԿԴՀ-ում մահացել է 999 մարդ, իսկ Ուգանդայում՝ եւս 2-ը: ԿԴՀ-ում վիրուսի լաբորատոր հաստատված դեպքերի թիվը հասել է 2473-ի, մինչդեռ Ուգանդայում՝20-ի: ԿԴՀ-ում եւս 322 դեպք կասկածվում է Էբոլայի հետ կապված: Երկու երկրներում էլ 501 մարդ ապաքինվել է: Մահացության մակարդակը կազմում է 40%:

ԿԴՀ կառավարությունը պաշտոնապես հայտարարել է Էբոլայի բռնկման մասին մայիսի 15-ին: Նույն օրը Ուգանդայի առողջապահության նախարարությունը հաստատել է առաջին ներմուծված դեպքը: Մայիսի 17-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենը ԿԴՀ-ում եւ Ուգանդայում Էբոլայի բռնկումը հայտարարել է միջազգային նշանակության հանրային առողջապահության արտակարգ իրավիճակ: Բռնկման էպիկենտրոնը Իտուրի նահանգն է, որը սահմանակից է Ուգանդային:

ՈՉՆՉԱՑՐԵԼ Է ՊԱՇԱՐԸ

Ռուսաստանի հրթիռային հարվածի հետեւանքով Ուկրաինայում ոչնչացվել են մոտ 2.6 միլիոն դոլարի արժողությամբ ՄԻԱՎ-ի կանխարգելման պարագաներ:

Հանրային առողջության դաշինքի տվյալներով՝ հարվածը վնասել է Կիեւի մոտ գտնվող պահեստը, որտեղ պահվում էին 62 միլիոն կանխարգելիչ միջոցներ՝ ներառյալ ներարկիչներ, ասեղներ, սպիրտային անձեռոցիկներ եւ պահպանակներ, որոնք նախատեսված էին ավելի քան 300 հազար մարդու համար:

Կազմակերպությունը նշել է, որ հարձակումը անմիջապես չի դադարեցնի ծառայությունները, քանի որ անհրաժեշտ պաշարների մի մասը նախապես տեղափոխվել էր տարածաշրջանային կենտրոններ, սակայն անհրաժեշտ է շտապ վերականգնել հաջորդ տարվա պաշարները:

Ուկրաինայում ՄԻԱՎ-ով ապրում է շուրջ 240 հազար մարդ: Պատերազմը լուրջ վնաս է հասցրել երկրի առողջապահական համակարգին՝ դժվարացնելով բուժման եւ կանխարգելման ծրագրերի իրականացումը:

ԱՄՆ–ԻՑ ԽՆԴՐԵԼ Է

Պակիստանը ԱՄՆ-ից խնդրել է 10 միլիարդ դոլարի արժութային կայունացման ծրագիր՝ երկրի ֆինանսական վիճակը ամրապնդելու եւ ազգային արժույթի՝ ռուփիի վրա ճնշումը նվազեցնելու նպատակով: Reuters-ի տվյալներով՝ Իսլամաբադը ցանկանում է ԱՄՆ ֆինանսների նախարարության հետ կնքել մինչեւ 5 տարի ժամկետով աջակցության համաձայնագիր, որը կօգնի մեծացնել արտարժութային պահուստները եւ նվազեցնել կախվածությունը միջազգային վարկերից:

Այս քայլը հաջորդում է Պակիստանի ակտիվ դիվանագիտական դերակատարությանը՝ Իրանի շուրջ բանակցություններում: Երկիրը նաեւ շարունակում է իրականացնել ԱՄՀ-ի պահանջած բարեփոխումները՝ հարկերի բարձրացում, ծախսերի կրճատում եւ ֆինանսական կարգապահություն:

Պակիստանը վերջին տարիներին խուսափել է դեֆոլտից՝ԱՄՀ-ի եւ այլ գործընկերների ֆինանսական աջակցությամբ, սակայն դեռ կախված է արտաքին օգնությունից: ԱՄՆ ֆինանսների նախարարությունը չի մեկնաբանել հնարավոր համաձայնագրի վերաբերյալ տեղեկությունները:

ՆՈՐ ՀՈՒՅՍ

Ուկրաինայի նախկին պաշտպանության նախարար Միխայիլ Ֆեդորովը շնորհավորել է Միխայիլ Դրապատիին՝ՋՈՒ գերագույն հրամանատար նշանակվելու կապակցությամբ՝ այն անվանելով «թարմ օդի շունչ եւ նոր հույս»:

Ֆեդորովը նշել է, որ Դրապատիից սպասվում է հստակ ռազմավարություն՝ պատերազմը ավարտելու, զինվորների կյանքը պահպանելու եւ հակառակորդին հակազդելու ուղղությամբ: Նա նաեւ շնորհակալություն է հայտնել նախկին գլխավոր հրամանատար Ալեքսանդր Սիրսկիին՝ Կիեւի մարզի պաշտպանության եւ Խարկովի գործողության համար:

Հուլիսի 21-ին Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարել էր Միխայիլ Դրապատիին Ուկրաինայի ՋՈՒ նոր գերագույն հրամանատար նշանակելու մասին:

● *Հանրապետությունում հուլիսի 17-ից 20-ը բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 10 դեպք:*

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿ

Ֆասթ Բանկն իր ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է նոր ներդրումային վարկ արտերկրում անշարժ գույք ձեռք բերելու համար: Առաջարկվող վարկի շրջանակներում Ֆասթ Բանկը տրամադրում է 16-150 միլիոն ՀՀ դրամի եւ 50-350 հազար ԱՄՆ դոլարի չափով գումար: Վարկատեսակը հնարավորություն է տալիս ներդրում կատարել Հայաստանի սահմաններից դուրս եւ ստեղծել եկամտի լրացուցիչ աղբյուր:

Հավելենք, որ Ֆասթ Բանկը ներդրել է ճկուն գործիքակազմ ներդրումային վարկ ձեռք բերելու համար. հաճախորդները, որոնց վարկային հայտը կուղեկցվի եկամուտների հիմնավորմամբ, հնարավորություն ունեն ձեռք բերել վարկը 13,5% տարեկան անվանական տոկոսադրույքով ՀՀ դրամի դեպքում եւ 10,5%՝ ԱՄՆ դոլարի դեպքում: Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը ՀՀ դրամի դեպքում կկազմի 14.37-17.69%, իսկ ԱՄՆ դոլարի դեպքում՝ 10.47-12.27%:

Առանց եկամուտների հիմնավորմամբ վարկերը տրամադրվում են 15% տարեկան անվանական տոկոսադրույքով ՀՀ դրամի դեպքում եւ 12%՝ ԱՄՆ դոլարի դեպքում: Համապատասխանաբար վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը ՀՀ դրամի դեպքում կկազմի 16.08-18.24%, ԱՄՆ դոլարի դեպքում՝ 12.68-14.54%:

Արտերկրում անշարժ գույքի ձեռքբերման ներդրումային վարկը տրամադրվում է 36-240 ամիս ժամկետով:

Ընդգծենք, որ ձեռք բերվող անշարժ գույքը նախատեսված է միայն եկամուտ ստանալու համար եւ չի կարող դառնալ հիմնական բնակության վայր: Ներդրումային վարկ ստանալու համար կարող են դիմել ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

Հայտարարություն

Կորել է Սարգիս Հրանտի Հակոբյանին պատկանող տրակտորի տեխնիկական վկայագիրը, վկայագրի համարը՝ Բ № 003216:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ Գ

ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արդշինբանկը ճանաչվել է «Լավագույն բանկը Հայաստանում» բրիտանական Euromoney Awards for Excellence 2026 մրցանակաբաշխության ժամանակ՝ հերթական անգամ հաստատելով իր առաջատար դիրքը Հայաստանի բանկային համակարգում:

Euromoney-ի գնահատմամբ՝ այս մրցանակը շնորհվել է Արդշինբանկին 2025 թվականի ընթացքում գրանցած կայուն ֆինանսական արդյունքների, վարկավորման շարունակական աճի, թվային ծառայությունների զարգացման եւ հաճախորդների սպասարկման որակի բարելավման համար:

Մրցանակաբաշխության ժյուրին ընդգծել է, որ Արդշինբանկը կարողացել է արդյունավետորեն համատեղել ֆինանսական կայունությունն ու տեխնոլոգիական նորարարությունը՝ ապահովելով շոշափելի արդյունքներ մանրածախ, կորպորատիվ եւ ՓՄՁ բանկինգի ուղղություններում:

2025 թվականին Արդշինբանկի վարկային պորտֆելն աճել է 30.3%-ով, իսկ հաճախորդների թիվը գերազանցել է 580 հազարը՝ արտացոլելով բանկի կայուն աճն ու հաճախորդների շարունակական վստահությունը:

«Այս մրցանակը մեզ համար կարեւոր գնահատական է ոչ միայն ֆինանսական արդյունքների, այլեւ այն ռազմավարության համար, որը հետեւողականորեն իրականացնում ենք՝ կառուցելով ժամանակակից, տեխնոլոգիական եւ հաճախորդակենտրոն բանկային ծառայությունների համակարգ: Այն մեր ամբողջ թիմի աշխատանքի, մեր հաճախորդների վստահության եւ գործընկերների հետ արդյունավետ համագործակցության արդյունքն է: Մենք շարունակելու ենք ներդրումներ կատարել նորարարությունների, թվային լուծումների եւ ծառայությունների որակի բարելավման մեջ՝ ստեղծելով ավելի մեծ արժեք մեր հաճախորդների, Հայաստանի տնտեսության եւ ֆինանսական համակարգի համար», - նշել է Արդշինբանկ ԲԲԸ վարչության նախագահ Արտակ Անանյանը:

Euromoney Awards for Excellence մրցանակաբաշխությունը համաշխարհային ֆինանսական ոլորտի ամենահեղինակավոր մրցանակաբաշխություններից է: Ամեն տարի այն գնահատում է աշխարհի առաջատար ֆինանսական հաստատությունների գործունեությունը՝ հաշվի առնելով ֆինանսական արդյունքները, ռազմավարական զարգացումը, նորարարությունները, թվային փոխակերպումը, կորպորատիվ կառավարումը եւ հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակը:

Արդշինբանկը Euromoney-ի կողմից «Լավագույն բանկը Հայաստանում» մրցանակին արժանացել է նաեւ 2020 եւ 2023 թվականներին: 2026 թվականի այս ճանաչումը վերահաստատում է Արդշինբանկի առաջատար դիրքը՝ արտացոլելով բանկի երկարաժամկետ զարգացման ռազմավարության արդյունավետությունն ու շարունակական ձգտումը գերազանցության:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

2026թ-ի օգոստոսի 4-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 92 լոտ՝ ոսկյա զարդեր 21.6գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 21.4գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 574,400 ՀՀ դրամ: Թիվ 99 լոտ՝ ոսկյա ջարդոն 11.7գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 11.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 308.600 ՀՀ դրամ: Թիվ 101 լոտ՝ ոսկյա ջարդոն 10.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 10.7գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 287,000 ՀՀ դրամ: Թիվ 103 լոտ՝ ոսկյա զարդ 10.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 10գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 268.400 ՀՀ դրամ: Թիվ 104 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 27.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 27.3գր), որից 6.6գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 6.5գր) 500 հարգի՝ 149.000 ՀՀ դրամ, 21.2գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ (զուտ քաշը 20.8գր) 585 հարգի՝ 558.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 707.000 ՀՀ դրամ: Թիվ 115 լոտ՝ ոսկյա ջարդոն 9.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 7.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 201.300 ՀՀ դրամ: Թիվ 116 լոտ՝ ոսկյա ջարդոն 4.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 4գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 91.760 ՀՀ դրամ: Թիվ 118 լոտ՝ ոսկյա զարդ 37.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 37գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 993.100 ՀՀ դրամ: Թիվ 119 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 9.6գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 9.3գր), որից 3.6գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 3.3գր) 500 հարգի՝ 75.700 ՀՀ դրամ, 6գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 900 հարգի՝ 247.776 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 323.476 ՀՀ դրամ: Թիվ 120 լոտ՝ ոսկյա ջարդոն 4.2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 4գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 91.760 ՀՀ դրամ: Թիվ 121 լոտ՝ ոսկյա ջարդոն 6.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 5.4գր), որից 3.3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.5գր) 500 հարգի՝ 57.350 ՀՀ դրամ, 3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.9գր) 585 հարգի՝ 77.840 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 135.190 ՀՀ դրամ: Թիվ 122 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 26.4գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 25.2գր), որից 6.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 5.2գր) 500 հարգի՝ 119.288 ՀՀ դրամ, 20.2գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 20գր) 585 հարգի՝ 536.820 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 656.108 ՀՀ դրամ: Թիվ 123 լոտ՝ ոսկյա ջարդոն 7.5գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 7.4գր), որից 5.3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 232.960 ՀՀ դրամ, 2.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.1գր) 585 հարգի՝ 56.360 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 289.320 ՀՀ դրամ: Թիվ 124 լոտ՝ ոսկյա ջարդոն 24,2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 22.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 603.920 ՀՀ դրամ: Թիվ 128 լոտ՝ ոսկյա ջարդոն 29,1 գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 28գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 751.550 ՀՀ դրամ: Թիվ 129 լոտ՝ ոսկյա ջարդոն 16.2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 16գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 429.450 ՀՀ դրամ: Թիվ 130 լոտ՝ ոսկյա ջարդոն 7.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 7գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 187.880 ՀՀ դրամ: Թիվ 131 լոտ՝ ոսկյա զարդ 10.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 9.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 255.000 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ +374 43 00 42 27

Յունիբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՉՎՃԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

ԻՆՉ ԾԱՆՐ ՎԻՃԱԿՈՒՄ Է ԺԱՄԱՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

«Կլուժի» ճամբարում գերադասում են լռել ակումբում տիրող ֆինանսական կոլապսի մասին. Կոնֆերենցիաների լիգայի որակավորման երկրորդ փուլի «Ալաշկերտի» դեմ խաղից առաջ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ թիմի գլխավոր մարզիչ Անտոնիո Ֆոլյան եւ կիսապաշտպան Կառլո Մուխարը շրջանցեցին սկանդալային թեմաները՝ կենտրոնանալով բացառապես երեւանյան հանդիպման վրա, armsport-ի փոխանցմամբ՝ այս մասին գրում է gsp.ro-ն:

Ուշագրավ է, որ ասուլիսին ներկա էր հենց այն ֆուտբոլիստը՝ Կառլո Մուխարը, ով օրերս պաշտոնական ծանուցում է ուղարկել ակումբի իրավաբանական բաժին՝ պահանջելով մարել իր չվճարված աշխատավարձերը: Չնայած «Կլուժում» տիրող ծանրագույն ֆինանսական ճգնաժամին, մարզիչ Անտոնիո Ֆոլյան ամեն կերպ խուսափեց մեկնաբանել ստեղծված իրավիճակը, իսկ Մուխարը նույնպես ոչ մի բառ չասաց ակումբի խնդիրների մասին՝ խոսելով միայն հուլիսի 23-ին կայանալիք հանդիպման մասին:

Անդրադառնալով ակումբի ֆինանսական դժվարություններին եւ նոր խաղացողների գրանցման հետ կապված խնդիրներին՝ Անտոնիո Ֆոլյան կարճ կապեց. «Միակ բանը, որ կարող եմ ասել այն է, որ մենք այստեղ ենք ողջ թիմով՝ անելու առավելագույնը: Սա միակ բանն է, ինչի վրա ես կենտրոնացած եմ՝ դաշտում անել մեր ուժերի ներածին չափով հնարավոր ամեն ինչ»:

Խոսելով «Ալաշկերտի» մասին՝ պորտուգալացի մասնագետը նշեց. «Իհարկե, հնարավորություն ունեցել եմ վերլուծելու մրցակցին: Նրանք բարդ թիմ են, որը մեզ համար դժվարություններ կստեղծի: Եթե խաղանք մեր հնարավորությունների առավելագույն չափով, լավ հանդիպում կանցկացնենք: Ի դեպ, սա իմ առաջին այցը չէ Հայաստան: Որպես պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ՝ ես ժամանակին ազգային հավաքականիս կազմում խաղացել եմ Հայաստանի դեմ:

(Հանդիպումը կայացել է 1996 թվականի օգոստոսի 31-ին, «Հրազդան» մարզադաշտում: Հանդիպումն ավարտվել է գոլազուրկ ոչ-ոքիով: Ֆոլյան խաղացել է մեկ խաղակես եւ փոխարինվել երկրորդում):

Բայց այսօր նոր ենք ժամանել եւ շատ բան չենք հասցրել տեսնել ավտոբուսի պատուհանից բացի: Կենտրոնացած ենք միայն խաղի վրա:

«Իմ կարծիքով, փլեյ-օֆֆ խաղերում ֆավորիտներ չկան: Ես հիանալի կոլեկտիվ ունեմ, հիանալի տղաներ, ովքեր ինձ վստահություն են ներշնչում, որ վաղը կարող ենք շատ լավ խաղալ: Որպես մարզիչ, չեմ սիրում առանձնացնել ոչ իմ ֆուտբոլիստներին, ոչ էլ մրցակցի: Բայց վաղվա մրցակցի մասով, անշուշտ, կարող եմ առանձնացնել նրանց ավագին, հարձակվողական ոճի կիսապաշտպանին եւ առջեւի գծի եռյակին: Հարձակվողները մեծ որակներ ունեն եւ, եթե թույլ տանք, շատ խնդիրներ կստեղծեն մեզ համար: Մենք պատրաստ կլինենք կանգնեցնել նրանց», - եզրափակել է Ֆոլյան:

Իր հերթին, կիսապաշտպան Կառլո Մուխարը նշեց, որ ծանոթ է հայկական ֆուտբոլին իր ընկերոջ միջոցով.

«Անձամբ ես չեմ կենտրոնացել որեւէ առանձին ֆուտբոլիստի վրա, բայց լսել եմ, որ նրանք հիանալի թիմ ունեն: Զրուցել եմ Հայաստանում խաղացող իմ ընկերներից մեկի հետ: Նա ասաց, որ «Ալաշկերտը» գերազանց կոլեկտիվ ունի, իսկական մարտիկներ են: Նրանք պայքարում են յուրաքանչյուր գնդակի համար, ունեն ճիշտ մենթալիտետ մենապայքարներում եւ երկրորդ հարկում: Ակնկալում եմ, որ վաղը էներգիայով լի հանդիպում է լինելու, եւ մենք պայքարելու ենք ամեն գնդակի համար»:

Մինչ թիմը Երեւանում փորձում է կենտրոնանալ ֆուտբոլի վրա, Ռումինիայում ակումբը իսկական աղետի մեջ է: Այն բանից հետո, երբ ակումբը երեքշաբթի օրը հազիվհազ լուծեց տրանսֆերային մի արգելք, անմիջապես ստացավ նորը՝ այս անգամ առաջիկա 3 տրանսֆերային պատուհանների համար: Մինչ այս որոշման ուժի մեջ մտնելը, ակումբը հասցրել է գրանցել 4 նորեկների՝ Ռենատո Պանտալոնին, Յուվալ Սադեին, Անդրե Մորեյրային եւ Բրունո Կոստային:

Իրավիճակն ավելի է սրվում ներքին դժգոհություններով. թիմի առանցքային խաղացողներ Կառլո Մուխարն ու Անդրեյ Կորդեան դիմել են ակումբի իրավաբանական բաժին՝ պահանջելով վճարել իրենց աշխատավարձերը, իսկ ակումբի նախագահ Յուլիու Մուրեշանը արդեն իսկ հրաժարականի դիմում է ներկայացրել:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀՐԱԺԱՐՎԵԼ «ՓԻԹ» ԱԶԳԱՆՈՒՆԻՑ

Անջելինա Ջոլիի եւ Բրեդ Փիթի ընտանիքի շուրջ զարգացումները շարունակվում են: Զույգի վեց երեխաներից արդեն չորսը դիմել են դատարան՝ իրենց ազգանունից «Փիթ» մասը հեռացնելու համար: Վերջինը նման դիմում է ներկայացրել 18-ամյա Վիվիենը, որը հուլիսի 21-ին պաշտոնապես դիմել է դատարան:

Դատարան ներկայացված փաստաթղթերում նշվում է, որ ազգանվան փոփոխության պատճառը «անձնական» է: Ավելի վաղ նույն քայլն էին կատարել Շայլոն, Զահարան եւ Մեդոքսը: Շայլոյի դիմումը հաստատվել էր դեռեւս 2024 թվականին, իսկ Մեդոքսի, Զահարայի եւ այժմ նաեւ Վիվիենի գործերը դեռ գտնվում են դատական ընթացքի մեջ: Մեդոքսի լսումը նախատեսված է սեպտեմբերի 14-ին, Զահարայինը՝ սեպտեմբերի 28-ին, իսկ Վիվիենինը՝ նոյեմբերի 2-ին: PEOPLE-ի աղբյուրի փոխանցմամբ՝ Անջելինա Ջոլին ցանկանում է, որ «բոլորը բուժվեն» եւ ընտանիքում հնարավոր լինի հաղթահարել երկար տարիների լարվածությունը: Մյուս կողմից, Բրեդ Փիթին մոտ կանգնած աղբյուրը նախկինում PEOPLE-ին հայտնել էր, որ ցավալի է տեսնել, թե ինչպես է, իր խոսքով, «հրապարակայնացվում երեխաների՝ մյուս ծնողից օտարման գործընթացը»:

Ոչ Անջելինա Ջոլին, ոչ Բրեդ Փիթը հրապարակայնորեն չեն մեկնաբանել երեխաների ազգանվան փոփոխության դիմումները: Վերջին անգամ Բրեդ Փիթը ընտանիքի կարեւորության մասին խոսել էր 2025 թվականի հունիսին՝ F1 ֆիլմի պրեմիերայի ընթացքում տված հարցազրույցում: Դերասանը նշել էր, որ տարիքի հետ առավել ակնհայտ է դառնում ընտանիքի եւ մտերիմ մարդկանց արժեքը՝ ընդգծելով, որ ամենակարեւորը սիրող ու վստահելի մարդկանց շրջապատում լինելն է:

ԹԱՐՄԱՑՐԵԼ Է

ԱՌԱՋԻՆԸ ՉԷ

Աշխարհի 2026թ. առաջնության ավարտից հետո հեղինակավոր Transfermarkt վերլուծական պորտալը թարմացրել է մրցաշարում աչքի ընկած 99 ֆուտբոլիստների տրանսֆերային արժեքները, հայտնում է armsport-ը: Թարմացման գլխավոր իրադարձությունը պատմական ռեկորդն է. առաջին անգամ ֆուտբոլիստների գնահատված արժեքը գերազանցել է 200 միլիոն եվրոյի նշագիծը: Յուցակի վերնամասում են հայտնվել Նորվեգիայի հավաքականի եւ «Մանչեսթեր Սիթիի» հարձակվող Էրլինգ Հալանդը, ինչպես նաեւ աշխարհի նորընծա չեմպիոն Իսպանիայի հավաքականի ու «Բարսելոնայի» վինգեր Լամին Յամալը: Երկու ֆուտբոլիստներն էլ ավելացրել են իրենց արժեքին 20-ական միլիոն եվրո, եւ այժմ նրանցից յուրաքանչյուրը գնահատվում է 220 միլիոն եվրո:

Լամին Յամալ (220 մլն եվրո). Ընդամենը 19 տարեկանում իսպանացի հրաշամանուկն արդեն նվաճել է թե՛ Եվրոպայի, թե՛ աշխարհի չեմպիոնի տիտղոսները՝ հաստատելով համաշխարհային ֆուտբոլի գլխավոր երիտասարդ տաղանդի կարգավիճակը: Transfermarkt-ի փորձագետները նշում են, որ նույնիսկ Լիոնել Մեսսին նման տարիքում չուներ համադրելի տիտղոսներ եւ միջազգային փորձ:

Էրլինգ Հալանդ (220 մլն եվրո). Չնայած Նորվեգիայի հավաքականը քառորդ եզրափակչում 1:2 հաշվով զիջեց Անգլիային, Հալանդն անցկացրած 5 խաղում խփեց 7 գոլ: 25 տարեկանում նա ազգային թիմի կազմում 52 խաղում արդեն դարձել է 62 գոլի հեղինակ:

Կիլիան Մբապե (200 մլն եվրո). Ֆրանսիայի հավաքականի ավագը 10 գոլով նվաճեց մրցաշարի «Ոսկե խաղակոշիկը»: Նրա տրանսֆերային արժեքը նույնպես աճեց 20 միլիոնով՝ հասնելով 200 միլիոն եվրոյի, ինչը նրան պահում է լավագույն եռյակում:

Էրլինգ Հալանդ («Մանչեսթեր Սիթի») - 220 մլն եվրո

Լամին Յամալ («Բարսելոնա») - 220 մլն եվրո

Կիլիան Մբապե («Ռեալ Մադրիդ») - 200 մլն եվրո

Մայքլ Օլիսե («Բավարիա») - 170 մլն եվրո

Ջուդ Բելինգհեմ («Ռեալ Մադրիդ») - 160 մլն եվրո

Պեդրի («Բարսելոնա») - 140 մլն եվրո

Վինիսիուս Ժունիոր («Ռեալ Մադրիդ») - 140 մլն եվրո

Վիտինյա (ՊՍԺ) - 140 մլն եվրո

Ժոաու Նեւեշ (ՊՍԺ) - 140 մլն եվրո

Դեկլան Ռայս («Արսենալ») - 120 մլն եվրո

ԱԱ-2026-ից հետո «100 միլիոն եվրոյից բարձր» արժեք ունեցող ֆուտբոլիստների ցանկը համալրվեց եւս 4 խաղացողով՝ ընդհանուր թիվը հասցնելով 26-ի:

Էլիոթ Անդերսոն (Անգլիա) - 110 մլն եվրո. Դարձավ առաջնության ամենաշատ թանկացած ֆուտբոլիստը՝ ավելացնելով 35 միլիոն եվրո:

Մորգան Ռոջերս (Անգլիա) - 110 մլն եվրո. Ավելացրեց 20 միլիոն եվրո:

Պաու Կուբարսի (Իսպանիա) - 100 մլն եվրո. Աշխարհի չեմպիոնն ու մրցաշարի լավագույն երիտասարդ խաղացողը (+20 մլն) հավասարվեց Ուիլիամ Սալիբային՝ դառնալով աշխարհի ամենաթանկարժեք կենտրոնական պաշտպաններից մեկը:

Էնցո Ֆերնանդես (Արգենտինա) - 100 մլն եվրո. Արգենտինացին ավելացրեց 10 միլիոն եվրո:

Թարմացման ամենաարտասովոր ցուցանիշը գրանցել է Կաբո Վերդեի հավաքականի 40-ամյա դարպասապահ Վոզինյան:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հուլիսի 26-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Ոսկե ձկնիկը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Արդյո՞ք գործարքի կամ գործարար հարաբերության իրական շահառու կարող է լինել անչափահաս անձը:

Նվարդ Գասպարյան, 56 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն գործարքում կամ գործարար հարաբերությունում իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը,

ա) որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, եւ/կամ

բ) որն իրականում վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունը իրականացվում է, եւ/կամ

գ) այն անձը, որին պատկանում է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը, կամ

դ) այն անձը, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է:

Ո՛չ Օրենքում, ո՛չ միջազգային ստանդարտներում իրական շահառուի չափահասության վերաբերյալ պահանջներ առկա չեն: Ըստ այդմ, անչափահաս անձը եւս կարող է համարվել գործարքի կամ գործարար հարաբերության իրական շահառու, եթե համապատասխանում է Օրենքի վերոգրյալ հիմքերից որեւէ մեկին:

Այնուամենայնիվ, իրական շահառուի բացահայտման համապարփակության եւ արդյունավետության տեսանկյունից կարեւոր են նաեւ օրենսդրությամբ քաղաքացու գործունակությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ քաղաքացու գործունակությունը, այն է՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու եւ իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը, ամբողջ ծավալով ծագում է չափահաս տարիքից՝18 տարեկանից: Միեւնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ տասնչորս տարեկանը չլրացած անչափահասների փոխարեն գործարքները՝ բացառությամբ մանր կենցաղային, նոտարական վավերացում եւ պետական գրանցում չպահանջող, օրինական ներկայացուցչի կողմից տրամադրված միջոցները տնօրինելու գործարքների, կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները (այսուհետ՝ օրինական ներկայացուցիչներ): Հարկ է նշել, որ անգամ բացառություն կազմող դեպքերում գույքային պատասխանատվությունը միեւնույն է կրում են օրինական ներկայացուցիչները:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրական շահառուն տասնչորս տարին չլրացած անչափահաս է, բանկը պարտավոր է որպես իրական շահառու դիտել եւ Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված գործողությունները իրականացնել նաեւ նրա օրինական ներկայացուցիչների նկատմամբ:

ՀՀ ԿԲ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դերը կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացում:

Արամ Համբարձումյան, 67 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ 2023-2026 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի հիման վրա 2024 թվականին Հանձնաժողովը մշակել եւ Արդարադատության նախարարություն է ներկայացրել ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է Հանձնաժողովին վերապահել հանրային իշխանության մարմիններում, պետական եւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 եւ ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության եւ համայնքի մասնակցությամբ առեւտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման եւ կառավարման միասնականության ապահովման, իրավասու մարմիններ առաջարկությունների ներկայացման գործառույթները: Բացի այդ, նախագծի ընդունմամբ Հանձնաժողովին կվերապահվի նաեւ կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակման եւ հաստատման, ինչպես նաեւ մասնագիտական խորհրդատվության եւ մեթոդական աջակցության տրամադրման գործառույթները:

Այս փուլում Հանձնաժողովը կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության նախագծի հիման վրա իրականացնում է կոռուպցիոն ռիսկերի փորձնական գնահատումներ՝նախագիծը լավարկելու եւ ՀՀ առանձնահատկություններին համապատասխանեցնելու նպատակով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝Գագիկ Շամշյանի

Արտակարգ իրավիճակ Կոտայքի մարզում. Նուռնուսից դեպի Նուռնուսի ամառանոցներ տանող հատվածում 3-4 օր է՝խմելու ջուրը տոննաներով թափվում ու կորում է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 10 + 15	+ 23 + 28
Կոտայքի լեռներ	+ 10 + 14	+ 23 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21	+ 31 + 33
Գեղարքունիք	+ 10 + 15	+ 20 + 25
Լոռի	+ 11 + 16	+ 22 + 26
Տավուշ	+ 12 + 16	+ 23 + 26
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13	+ 22 + 26
Արագածոտնի նախալեռներ	+ 17 + 22	+ 30 + 35

Արարատ	+ 19 + 23	+ 32 + 36
Արմավիր	+ 20 + 23	+ 34 + 37
Վայոց ձորի լեռներ	+ 12 + 15	+ 24 + 28
Վայոց ձորի նախալեռներ	+ 20 + 24	+ 34 + 37
Սյունիքի լեռներ	+ 10 + 14	+ 19 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 17	+ 27 + 30
Սյունիքի հովիտներ	+ 19 + 23	+ 33 + 36
Երեւան	+ 22 + 24	+ 34 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.07.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*